Ученические
дневники [illegible]
[illegible] Кремль [illegible]
[illegible]

Ленинград 1935

352
4-21

352
Կ-21
1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

№ 1056
352(47.2)1(0

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԼԵՆԻՆԱԿԱՆ 1935 թ.

352
4-21

Տեղաբդի տպարան Լենինակա-
նում. պատվեր № 2274, տիրաժ
2500 որ. Գլավլիտ 256

ՎՃՌՈՇՈՒՄ

Հ. Մ. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Գյուղական խորհրդներին տրված վերստուգիչ հանձնաժողովների կանոնադրությունը հաստատելու մասին

1934 թ. Փետրվարի 15-ին

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ՎՃՌՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել գյուղխորհրդներին առընթեր վերստուգիչ հանձնաժողովների նոր կանոնադրության նախագիծը։

2. Վերացված համարել Գյուղխորհրդների վերստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ 20-ը ապրիլի 1926 թ. կանոնադրությունը (Որ. և կարգ. ժող. 1926 թ. № 5 հոդ. 48)։

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՆԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Գյուղխորհրդներին առընթեր կազմակերպվում են գյուղական վերստուգիչ հանձնաժողովներ։

17 MAY 2013

39443

2. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անմիջական խնդիրն է՝ գյուղական խորհրդների, ինչպես նաև նրանց յենթակա հիմնարկների և ձեռնարկությունների տնտեսական-ֆինանսական աշխատանքների վերաբերյալ իրականացնել աշխատավարձական լայն մասսաների իրական, սիստեմատիկ հսկողություն:

3. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են 3 անդամի և 2 թեկնածուի կազմով համապատասխան գյուղխորհրդի ընտրության հետ միաժամանակ, ընտրողների ընդհանուր ժողովի կողմից (հասարակական ժողով)՝ նույն կարգով և լիազորության ժամկետով:

Այն գյուղերում, որտեղ ընտրամասերի թիվը յերեքից (3) ավելի յե, գյուղական վերստուգիչ հանձնաժողովի անդամների և թեկնածուների ընտրության կարգը սահմանում է շրջանային գործադիր կոմիտեն:

4. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անդամները կարող են ընտրվել ընտրական իրավունքից չզրկված բոլոր քաղաքացիները, բացառությամբ՝

ա. Այն գյուղխորհուրդների անդամներից ու թեկնածուներից, որոնց առնթեր կազմակերպվում է վերստուգիչ հանձնաժողովը.

բ. Սույն հոդվածի «ա» կետում նշվածների ծնողներից, ամուսիններից, յեղբայրներից, քույրերից, տղաներից և աղջիկներից.

գ. Գյուղխորհրդի հսկողությանը յենթակա և նրա իրավասության տակ գտնվող հիմնարկությունների ու ձեռնարկությունների աշխատակիցներից ու ղեկավարներից:

դ. Տվյալ գյուղխորհրդի նախկին անդամներից ու թեկնածուներից, ինչպես նաև այդ մարմինների նախկին աշխատակիցներից մի տարվա ընթացքում, այդ պաշտոնները թողնելու որից.

յ. Տվյալ գյուղխորհրդի հողային հասարակությունների լիազորներից:

5. Վերստուգիչ հանձնաժողովների անդամներն իրենց աշխատանքներից կարող են հեռացվել միայն դեպի իրենց պարտականությունները բացահայտ անփույթ վերաբերմունք ցուցաբերելու կամ նրանց քրեական պատասխանատվության յենթարկելու դեպքում: Այդպիսի դեպքերում գյուղական վերստուգիչ հանձնաժողովի անդամները պաշտոնից հեռացվում են ընտրողների ընդհանուր ժողովի (հասարակական ժողովի) վորոշմամբ:

6. Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց կողմից ընտրում են նախագահ և քարտուղար:

7. Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքների համար ոգտվում են համապատասխան գյուղխորհրդի ապարատից:

2. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

8. Վերստուգիչ հանձնաժողովները համապատասխան գյուղխորհրդների սեկցիաների հետ աշխատում են ամենասերտ կերպով, իրենց աշխատանքների պլանները համաձայնեցնում են սեկցիաների աշխատանքների պլանների հետ և սեկցիաներին անմիջականորեն ժամանակից դարձնում իրենց աշխատանքներին:

9. Վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին անպայման մասնակից են դարձվում բատրակության, գյուղի չքավոր—սիջակ խավերի և աշխատավոր կանանց ներկայացուցիչները, ինչպես նաև արհմիութենական և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

3. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10 Վերստուգիչ հանձնաժողովները կատարում են հետևյալ աշխատանքները.

ա. Ստուգում են գյուղխորհրդների և նրանց յենթակա հիմնարկների ու ձեռնարկությունների կողմից տնտեսա—ֆինանսական գործունեության ապարեզում ընտրողների տված նակազների և խորհրդների շրջանային համագումարների վորոշումների կատարումը:

բ. Հսկում են գյուղատնտեսության, կոոպերացիայի և կոլխոզաշինարարության ամրապնդման և բարգավաճման համար

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՍՌ-ի ՊՊ.ՍՍՌ
Ա. Մարտիրոսյան

12810:63

գյուղխորհուրդների կողմից ձեռնարկումներ կատարելու, նաև նրանց կողմից զանազան կամպանիաների (գարնանացանի, հացամթերման և այլն) անցկացման, պետական փոխառությունները գյուղում տարածելու, պետական աշխատավորական խնայդրամարկղների ավանդային և գյուղատնտեսական վարկային գործառնությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների վրա, ինչպես նաև պետական փոխառություններից գյուղական բյուջեների օգտին մասնատրումներ կատարելու և այդ մասնատրումների օգտագործման վրա.

գ. Հսկում են հողային հասարակությունների նկատմամբ գյուղխորհուրդների գործունեության, ինչպես նաև իրենց հողային հասարակությունների ֆինանսա—տնտեսական բնագավառի գործունեության վրա.

դ. Ստուգում են գյուղխորհուրդների իրավասության տակ գըտնվող ձեռնարկությունների և գույքի շահագործման, ինչպես նաև գյուղխորհուրդների, հողային հասարակությունների, հատուկ կամ կամավոր տուրքերի, այդ թվում նաև ինքնահարկումների հաշվին կատարվող շինարարական, վերանորոգման, մթերման և տնտեսական բոլոր մյուս աշխատանքների նպատակահարմարության ու ճիշտ լինելը.

ե. Ստուգում են գյուղխորհուրդներին յենթակա բոլոր հիմնարկների ֆինանսա-տնտեսական գործունեությունը.

զ. Հսկում են, վորպեսզի բնակիչների ընդհանուր ժողովի ընդունած հացամթերման պլանի համաձայն հացը հանձնելուց խուսափող առանձին տնտեսություններից գանձվող տուգանքների գումարից գյուղական չքավորության կոոպերացման և կոլեկտիվացման ֆոնդին հասանելիք մասնատրումները կատարեն կանոնավոր և ժամանակին.

է. Ստուգում են գյուղական բյուջեյի մուտքի և ելքի կատարման ճշտությունը (ծախսերի համապատասխանումը նախահաշվային հատկացումներին, բյուջեյի կատարման, դրամարկղային պլանի պահպանումը, վարկերի տեղաշարժման օրինականությունը և հիմնարկությունների ու ձեռնարկությունների ֆինանսավորումը, բյուջետային պահեստի կազմակերպման և օգտագործման ճշտությունը).

ը. Ստուգում են. թե օրենքով գյուղխորհուրդներին տրամադրված տեղական յեկամտային աղբյուրները բյուջեյում կամ նախահաշվում վորքան լրիվ են արտացոլված և օգտագործված.

թ. Հսկում են հողային հասարակությունների յեկամուտները գյուղական բյուջեյին հանձնելու վրա.

ժ. Գյուղխորհուրդներին՝ յեզրակացություններ են տալիս գյուղական բյուջեյի կատարման մասին, (իսկ այն գյուղխորհուրդները վորոնք ինքնուրույն բյուջե չունեն —տվյալ գյուղխորհրդի մուտքի և ելքի նախահաշվի կատարման մասին), մասնակցում են առաջիկա տարվա գյուղական բյուջեյի կամ նախահաշվի քննությանը, նաև գյուղի հիմնարկությունների և ձեռնարկությունների ֆինանսա-տնտեսական պլանների քննությանը.

ժա. Ստուգում են գյուղխորհուրդների կողմից կնքված փոխառությունների գործառնությունների ճշտությունը.

ժբ. Ստուգում են ամեն տեսակի կամավոր տուրքերի, մասնավորապես ինքնահարկման և օրենքով սահմանված այլ տուրքերի (գյուղական կատարածու լինելու իրավունք չունեցող անձերից, ճանապարհաշինարարությանը՝ բնակչության կողմից աշխատավորական մասնակցության փոխարեն ստացված տուրքերը և այլն) կատարման և այդ ձևով գանձված միջոցների օգտագործման ճշտությունը.

ժգ. Ստուգում են հարկերի հաշվառման և գանձման, հարկման յենթակա առարկաների հայտաբերման, գյուղական ցուցակների ճիշտ կազմելու և գյուղատնտեսական սակավազոր միավորումների ու գյուղացիության սակավազոր խավերի համար սահմանված հարկային արտոնությունները ժամանակին կիրառելու բնագավառում գյուղխորհրդի գործունեությունը.

ժդ Ստուգում են գյուղխորհուրդների և նրանց յենթակա հիմնարկների , ձեռնարկությունների դրամական ու նյութական միջոցների և այլ գույքի ստացումը, պահպանումն ու ծախսումը, ինչպես նաև նրանց կողմից խնայողական ռեժիմի կիրառումը.

ժյե. Ստուգում են ապահովագրական գործառնությունների կիրառումը.

ժզ. Ստուգում են գյուղխորհրդի դրամական և նյութական հաշվետվությունը.

ժ. Հետևվում են սերմֆոնդի հավաքման, բաշխման ու ոգտագործման ճշտությանը և փայտանյութի ճիշտ բաշխմանը։

11. Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է խորհրդային իշխանության դասակարգային ընդհանուր գծով—գործող օրենքներով և վերագաս գործադիր կոմիտեների վորոշումներով։

Այն դեպքերում, յերբ վերստուգիչ հանձնաժողովը հայտաբերում է օրենքի խախտում, կամ խորհրդային իշխանության դասակարգային գծի խեղաթյուրում, ապա գյուղական վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պահանջել՝ հրավիրել ընտրողների ընդհանուր ժողով (հասարակական ժողով), միաժամանակ իրազեկ դարձնելով այդ մասին շրջանային գործադիր կոմիտեին։

12. Վերստուգիչ հանձնաժողովները ներկա յեն լինում նորընտիր գյուղխորհրդի կողմից նախկին գյուղխորհրդից գործերը ընդունելիս։

13. Վերագաս գործադիր կոմիտեները, ինչպես նաև ֆինանսական ու խորհրդային վերահսկիչ մարմինները կարող են գյուղական վերստուգիչ հանձնաժողովներին հանձնարարել գյուղխորհրդին փոխ յենթակա հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեության, այլ և նրանց միջոցներով կատարվող գործառնությունների հետաղոտումը։

14. Վերստուգիչ հանձնաժողովներին, նրանց վրա դրված պարտականությունների համապատասխան, վերապահվում են հետևյալ իրավունքները՝

ա. Քննում են ստուգվող մարմնի, հիմնարկության կամ ձեռնարկության գործունեությանը վերաբերող բոլոր գործերը, մատյանները, հաշիվները և այլ փաստաթղթերը.

բ. Ստուգելու համար պահանջում են ներկայացնել ստուգվող մարմնի, հիմնարկության կամ ձեռնարկության դրամական ու նյութական միջոցները և մասնավորապես այդ մարմիններում կատարում են դրամարկղի ստուգումներ.

գ. Անմիջականորեն կապվում են պետական հիմնարկությունների և հասարակական կազմակերպությունների հետ և նրանցից ստանում են ստուգման կամ հետաղոտության համար անհրաժեշտ տեղեկանքները.

դ. Կատարում են տեղում ստուգվող աշխատանքների, ինչպես նաև նրանց վերաբերող փաստաթղթերի քննություն և դրամական գումարների ու նյութերի հաշվառում.

յ. Գործուղում են վերստուգիչ հանձնաժողովների անդամներին առանձին հիմնարկություններ կամ ձեռնարկություններ՝ ստուգելու և հետաղոտելու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկանքներ ստանալու համար.

զ. Ստուգվող մարմինների, հիմնարկությունների և ձեռնարկությունների պաշտոնատար անձերից, ինչպես նաև ստուգվող աշխատանքները կատարողներից, պահանջում են բացատրություններ.

ե. Հրավիրում են իրենց ոգնելու համար տեղական աշխատողներից տեղյակ անձանց.

ը. Ներկա յին լինում այն հիմնարկությունների և ձեռնարկությունների ժողովներին ու խորհրդակցություններին, վորոնց վերստուգիչ հանձնաժողովներն իրավունք ունեն ստուգելու և հետաղոտելու.

թ. անհրաժեշտ դեպքերում պահանջում են հրավիրել ընտրողների ընդհանուր ժողով (հասարակական ժողով).

ժ. Ոգտվում են գյուղխորհրդների տրամադրության տակ յեղած փոխադրական միջոցներից՝ ստուգումներ կատարելու համար շրջադայելիս, և

ժա. Գյուղխորհրդներից, այլև վերագաս գործադիր կոմիտեներից և խորհրդային վերահսկիչ մարմիններից հետաղոտություններ և ստուգումներ կատարելու համար ստանում են առհաշիվ անհրաժեշտ գումարներ այն դեպքերում, յերբ ստուգումը կատարվում է նրանց հանձնարարությամբ։

15. Իշխանության բոլոր մարմինները, հիմնարկությունները ու կազմակերպությունները վերստուգիչ հանձնաժողովներին պետք է ցույց տան ամեն տեսակի աջակցություն։

16. Գյուղխորհրդներն իրավունք չունեն միջամտելու իրենց առընթեր կազմակերպված վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին և նրանց վորևե կարգադրություններ անելու և հանձնարարություններ տալու։

4. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ.

17. Վերստուգիչ հանձնաժողովների գործունեության ղեկավարությունն իրականացնում են վերագաս գործադիր կոմիտեները։ Այդ հանձնաժողովների հրահանգումը և համապատասխան մասում տեխնիկական ոգնություն ցույց տալը՝ դրվում է ֆինանսական և խորհրդային վերահսկիչ մարմինների վրա։

18. Գյուղխորհրդների գործունեության հերթական ստուգումները կատարում են համապատասխան վերստուգիչ հանձնաժողովները՝ տարեկան առնվազն 3 անգամ։ Արտակարգ ստուգումներ կարող են կատարվել վերստուգիչ հանձնաժողովների նախաձեռնությամբ, իրենց՝ վերագաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ և ընտրողների ընդհանուր ժողովների (հասարակական ժողովի) մի յերրորդի պահանջմամբ։ Գյուղխորհրդի վերջին ստուգումը պետք է կատարվի վոչ ուշ, քան մի ամիս առաջ գյուղխորհրդների վերընտրություններից։

19. Ստուգումը կամ հետազոտությունը կատարում է ընտրվող մարմինը, հիմնարկությունը, ձեռնարկությունը կամ աշխատանքը գլխավորող անձի կամ նրա տեղակալի ներկայությամբ։ Ստուգվող մարմնի ներկայացուցչի բացակայությամբ ստուգումը կատարելի թույլատրվում է անհետաձգելի դեպքերում, յերբ հնարավոր չէ շահագրգռված հիմնարկության ներկայացուցչին ստուգմանը մասնակից դարձնելը։ Այդ դեպքերում ստուգումը կատարելիս անպայման ներկա յի լինում տեղի գյուղխորհրդի անդամը կամ լիազորը։

20. Ստուգում կամ հետազոտում կատարելիս վերստուգիչ հանձնաժողովներն իրավունք չունեն միջամտելու ստուգվող մարմնի, հիմնարկության կամ ձեռնարկության ընթացիկ աշխատանքներին և անմիջականորեն նրանց վորյեվե կարգադրություն անելու։

21. Ստուգումը կամ հետազոտությունը ավարտելուց հետո վերստուգիչ հանձնաժողովն ամեն անգամ կազմում է գրավոր արձանագրություն, վորտեղ նշվում է ստուգման կամ հետազոտման առարկան, նրանց արդյունքները, այլև այն ձեռնարկումները, վորպիսիք վերստուգիչ հանձնաժողովն անհրաժեշտ կամ նպատակահարմար է համարում հայտնաբերած թերությունները վերացնելու համար։

Արձանագրությունները ստորագրում են վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ստուգվող մարմնի, հիմնարկության կամ ձեռնարկության ներկայացուցիչը, նաև ստուգմանը կամ հետազոտությանը մասնակցող այլ անձինք։ Յեթե վերստուգիչ հանձնաժողովի ստուգմանը կամ հետազոտությանը մասնակցողներից վորևե մեկն արձանագրության հետ համաձայն չէ, ապա նրան իրավունք է վերապահվում յերեք որվա ընթացքում արձանագրության մեջ մտցնել իր առանձին կարծիքը։

22. Վերստուգիչ հանձնաժողովի կազմած արձանագրությունը պահվում է վերստուգիչ հանձնաժողովի գործերում։ Այդ արձանագրության մի պատճենը թողնվում է ստուգվող մարմնում, հիմնարկությունում կամ ձեռնարկությունում, իսկ յերկրորդ պատճենն ուղարկվում է համապատասխան գյուղխորհրդին, յեթե ստուգումը կատարվել է նրան յենթակա հիմնարկություններում կամ ձեռնարկություններում. և վերագաս գործադիր կոմիտեին, յեթե ստուգման են յենթարկվում իրեն, գյուղխորհրդի գործունեությունը։

23. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովի արձանագրության առթիվ իր ընդունած վորոշումը գյուղխորհուրդն արձանագրությունն ստանալու պահից 10 որից վոչ ուշ հայտնում է վերստուգիչ հանձնաժողովին, վորը վերոհիշյալի հետ համաձայն չլինելու դեպքում այդ մասին զեկուցում է ընտրողների ընդհանուր ժողովին (հասարակական ժողով)։ Ընտրողների ընդհանուր ժողովն իրավունք ունի հարցը փոխադրել շրջանային գործադիր կոմիտեի նախագահությանը։

24. Յերբ վերագաս գործադիր կոմիտեների կամ ֆինանսական և խորհրդային վերահսկիչ մարմինների հանձնարարությամբ ստուգվում կամ հետազոտվում են գյուղխորհրդներին վոչ յենթակա հիմնարկությունները կամ ձեռնարկությունները, ապա վերստուգիչ հանձնաժողովը ստուգման կամ հետազոտման արդյունքների մասին հայտնում է այն գործադիր կոմիտեներին կամ ըստ պատկանելության համապատասխան մարմիններին, այլև այն

գյուղխորհրդներին, որոնց առընթեր գտնվում է տվյալ վերստուգիչ հանձնաժողովը։

25. Ստուգման ժամանակ կեղծիքների, վատնումների և այլ հանցագործությունների նշավակներ յուրեվան բերելու բոլոր դեպքերում վերստուգիչ հանձնաժողովը չսպասելով ստուգման ավարտմանը, այդ մասին անմիջապես իրազեկ է անում՝

ա. ժողովակա դատախազին, քննիչին, ժողդատավորին, միլիցիայի մարմիններին և

բ. համապատասխան գյուղխորհրդին։

Վերստուգիչ հանձնաժողովը գյուղխորհրդի կամ նրան յենթակա հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեության մեջ չարաշահություններ յուրեվան բերելու դեպքում այդ մասին զեկուցում է ընդհանուր ժողովում (հասարակական ժողովին), սակայն սույն հոդվածի «ա» և «բ» կետերում հիշված մարմիններին հայտնելու որից՝ 5-որվա ժամկետը լրանալուց վոչ շուտ։

26. Գյուղխորհրդի տերիտորիայում բանվորագյուղացիական իշխանության մարմինների կողմից կատարվող ստուգումներին մասնակից է արվում համապատասխան գյուղական վերստուգիչ հանձնաժողովի ներկայացուցիչը։

27. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքների և իրենց գործունեության համար պատասխանատու յեն ընտրողների ընդհանուր ժողովի (հասարակական ժողովի) առաջ։ Բացի դրանից, վերստուգիչ հանձնաժողովներն իրենց ստուգումների և կատարած հետազոտությունների արդյունքների մասին հայտնում են համապատասխան գյուղխորհրդին։ Իրենց աշխատանքների մասին զեկուցում են գյուղացիական լայն կոնֆերենցիաներում և համապատասխան գյուղխորհրդի յուրաքանչյուր զեկուցման ժամանակ սրանց գործունեության մասին հանդես են գալիս վորպես զեկուցակից։

28. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների հետ կապված իրենց գործունեության համար, պատասխանատու յեն վորպես պաշտոնատար անձինք։

29. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են համապատասխան գյուղխորհրդի բոլոր նիստերին։

5. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

30. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքները գլխավորապես կատարվում են աշխատանքի ժամերից դուրս։ Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներն աշխատանքի ժամերից դուրս կատարելու անհնարավորության դեպքում հիմնարկությունները, ձեռնարկությունները ու տնտեսությունները, վորտեղ ծառայում են կամ աշխատում վերստուգիչ հանձնաժողովի անդամները, պարտավոր են գյուղական վերստուգիչ հանձնաժողովի նախագահի պահանջմամբ, նրանց աշխատանքից ազատել՝ վերստուգիչ հանձնաժողովի անդամի պարտականությունները կատարելու ժամանակամիջոցում։

31. Վերստուգիչ հանձնաժողովի այն անդամները, վորոնք ծառայում են վարձով, իրենց պարտականություններն աշխատանքային ժամերին կատարելու դեպքում, ի հաշիվ վարձողի պահպանում են իրենց միջին աշխատավարձը— գյուղական վերստուգիչ հանձնաժողովի անդամների համար, տարվա մեջ 10 որվա սահմաններում։

Տարվա մեջ 10 որից ավելի որերի համար գյուղական վերստուգիչ հանձնաժողովի նշված անդամների վարձատրությունը կատարվում է ինքնուրույն բյուջե ունեցող գյուղխորհրդների միջոցների հաշվին, բացառությամբ 34-րդ հոդվածում նախատեսված դեպքերի, ըստ վորում վճարվող որերի առավել թիվը սահմանվում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ շրջանային գործադիր կոմիտեի կողմից։

32. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովի վոչ բանվոր ու ծառայող անդամները վարձատրվում են այն դեպքում, յերբ ստուգման աշխատանքները տևում են 5 ժամից ավելի, իսկ գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում՝ անկախ ստուգման տևողությունից։

Նշված դեպքերում վերստուգիչ հանձնաժողովի վոչ բանվոր և ծառայող անդամները, նայած տարիֆային դասին, վարձատրվում են հետևյալ կայուն դրույքներով—որական 1 ռուբլի —1-ին դասիով, 90 կոպեկ՝ 2-րդ դասիով, 80 կոպեկ՝ 3-րդ դասիով, 70 կոպեկ՝ 4-րդ դասիով և 60 կոպեկ՝ 5-րդ դասիով։

Սույն հոդվածում նշված վերստուգիչ հանձնաժողովի անդամների վարձատրվող ուրերի առավել թիվը սահմանվում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ շրջանային գործադիր կոմիտեի կողմից:

33. Վերստուգիչ հանձնաժողովի այն անդամներին, վորոնք իրենց պարտականությունները կատարում են վոչ իրենց մշտական բնակավայրում, բացառությամբ սույն կանոնադրության 34-րդ հոդվածում նախատեսված դեպքերի, համապատասխան գյուղխորհրդները, անկախ նրանց աշխատանքի վարձատրությունից (31 և 32-րդ հոդվ.), վճարում են օրապահիկ: Գյուղական վերստուգիչ հանձնաժողովի անդամների օրապահիկը սահմանում է գյուղխորհուրդը, սակայն վոչ պակաս ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ շրջանային գործադիր կոմիտեի վորոշած մինիմումներից: Բացի դրանից, ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ շրջանային գործադիր կոմիտեների վորոշած չափով նրանց տրվում է բնակարանի վարձ և տեղափոխության համար փաստական ծախսերը, յեթե նրանց բնակարան և փոխադրական միջոցներ ձրիաբար չեն տրամադրվում:

34. Գյուղխորհրդներին վոչ յենթակա հիմնարկների ու ձեռնարկությունների ստուգումներ և հետազոտություններ կատարող վերստուգիչ հանձնաժողովի անդամների աշխատանքի վարձատրությունը՝ 31—33 հոդվածներում նշված նորմաներով վճարում են գործադիր կոմիտեները և մյուս մարմինները, վորոնց առաջադրությամբ ստուգումը կամ հետազոտությունը կատարված է: Այդ նույն գործադիր կոմիտեները և մարմինները օրապահիկ և բնակարանի վարձ ու ճանապարհածախս վճարում են վերստուգիչ հանձնաժողովի այն անդամներին, վորոնք ստուգումը կամ հետազոտումը կատարում են իրենց մշտական բնակավայրից դուրս:

6. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

35. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների իրավունքները, պարտականությունները և աշխատանքի վարձատրության կանոնները տարածվում են նայև այդ հանձնաժողովի անդամների

թեկնածուների վրա այն դեպքերում, յերբ նրանք փոխարինում են վերստուգիչ հանձնաժողովի անդամներին՝ նրանց բացակայության ժամանակ, կամ յերբ նրանք հնարավորություն չեն ունենում կատարելու իրենց պարտականությունները՝ վերստուգիչ հանձնաժողովներում:

Խմբագրել յեվ Օրգժողկոմատի իրավաբանական բաժնի հետ համաձայնեցրել եմ՝ **Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Խ. Ս. Հ. Մ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1935 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

7 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքը բարելավելու նպատակով, վորոնք գյուղխորհրդի ֆինանսական գործերը ճիշտ վարելու նկատմամբ կոլտնտեսային գյուղի ունեցած հասարակական վերահսկողության կարևորագույն մարմինն են հանդիսանում, սահմանել, վոր՝

ա. գյուղական վերստուգիչ հանձնաժողովի նախագահը հաստատվում է շրջանային գործադիր կոմիտեի նախագահության կողմից:

բ. գյուղական վերստուգիչ հանձնաժողովի նախագահը գյուղական խորհրդի պաշտոնատար անձանց հետ միասին (նախագահ, քարտուղար, գանձապահ, հաշվետար) պատասխանատվություն է կրում գյուղական խորհրդում տեղի ունեցող վատնումների ու հափշտակումների համար՝ այն դեպքերում, յերբ այդ վատնումներն ու հափշտակումները հայտնաբերվում են անկախ վերստուգիչ հանձնաժողովից.

գ. գյուղական վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ամեն ամիս ստուգել գյուղական խորհրդի դրամարկղը, յեռամսյակի ընթացքում մեկ անգամ գյուղական խորհրդի դոկումենտալ ստուգում կատարել և առնվազն տարին մեկ անգամ դոկումենտալ կերպով ստուգել գյուղական բյուջեի մեջ գտնվող բոլոր հիմնարկները.

3к 512

գ. գյուղական վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ամեն յոթնամյակում գյուղական խորհրդի պլենումի նիստին զեկուցել գյուղական խորհրդի դրամարկղի վիճակի և սահմանված ֆինանսական կանոնների պահպանման մասին։

ի. շրջանային գործադիր կոմիտեի նախագահությունը պարտավոր է շրջանային ֆինանսական բաժինների միջոցով սիստեմատիկ կերպով ստուգել վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքը և հրահանգել նրանց։

16. Սխալ դատել այն, որ գյուղական խորհուրդների ֆինանսական սեկցիաները, որոնք հատուկ են գյուղի չավագույն ֆինանսական ակտիվիստներին, ներկայումս ոգտագործվում են գլխավորապես որպես հարկային ու ապահովագրական վճարումները գանձողներ։

Հավաքարարների ինստիտուտը վերացնելու և հարկային ու ապահովագրական վճարումները հավաքարարների միջոցով գարձնելն ալ գլխելու կապակցությամբ գյուղական խորհուրդների ֆինանսական սեկցիաները պետք է ոգնություն ցույց տան գյուղական խորհուրդներին, նրանց կողմից հարկային ու ապահովագրական վճարումների պետական պլանները կատարելու, ինչպես նաև գյուղական բյուջեները կազմելու և ճիշտ կերպով ոգտագործելու, գյուղում մասսայական փոխառությունները տարածելու, բնակչության խնայողությունները խնայդրամարկղներում ներգրավելու և խորհրդային իշխանության ֆինանսական այլ ձեռնարկումները կիրառելու ասպարիզում։

Ֆինանսական սեկցիաներն իրենց խնդիրները իրագործում են ֆինանսների բնագավառում գյուղում մասսայական աշխատանք կազմակերպելու և ֆինանսական ակտիվին գյուղական խորհրդի շուրջը հավաքելու միջոցով։

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՌ Арм. ССР
Ս. ԽՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0220819

39. 779